ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԱՅՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

2024Թ. ՄԱՐՏԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ

2024թ.

2024Թ.-Ի ՄԱՐՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

- ***Համաշխարհային տնտեսություն.*** մարտին ՀՀ գործընկեր երկրներում տնտեսական ակտիվության աճ է գրանցվել. ԱՄՆ-ում և ՌԴ-ում՝ պայմանավորված մշակող արդյունաբերության առավել արագ աճով՝ ի համեմատ ծառայությունների ոլորտի, իսկ ԵԳ-ում և Չինաստանում՝ ծառայությունների արագ աճով: Մետաղների և պարենային ապրանքների միջազգային գները փետրվարի համեմատ աճել են:
- ***Տնտեսության արտաքին հատված.*** արձանագրվել է արտահանման և ներմուծման աճի տեմպերի արագացում: Նախորդ տարվա մարտի նկատմամբ ՀՀ դրամը դոլարի նկատմամբ արժեզրկվել է 3%-ով, իսկ եվրոյի նկատմամբ՝ շուրջ 4.4%-ով: Ռուսական ռուբլու նկատմամբ դրամի արժևորման տեմպը նախորդ ամսվա համեմատ թուլացել է՝ կազմելով 17%: Վերջին երկու տարիների անընդմեջ աճից հետո ընթացիկ տարվա հունվար-մարտ ամիսներին արձանագրվել է ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվի նվազում (նվազումը մարտին կազմել է 3.6%):
- ***Տնտեսության իրական հատված.*** տնտեսական ակտիվության աճի տեմպը մարտին կազմել է 15.3%՝ փետրվարի նկատմամբ դանդաղելով 1.4 տոկոսային կետով՝ պայմանավորված հիմնականում արդյունաբերության և ծառայությունների ոլորտի աճերի դանդաղմամբ: 12 ամսյա գնաճը կազմել է -1.2%, իսկ բնականոն գնաճը կազմել է -0.7%:
- ***Տնտեսության ֆինանսական հատված.*** բանկային համակարգի ֆինանսական միջնորդությունը շարունակել է առաջանցիկ լինել տնտեսական ակտիվության համեմատ 17.9% վարկերի ծավալների աճով, որն ուղեկցվել է միջինում կայուն տոկոսադրույքներով: Իսկ պետական պարտատոմսերի տոկոսադրույքները բարձր հարաբերական պահանջարկի և դրամավարկային պայմանների մեղմացման ազդեցությամբ զգալի նվազել են:
- ***Տնտեսության հարկաբյուջետային հատված.*** հարկային եկամուտների աճի տեմպը կազմել է 9.3%, իսկ պետական բյուջեի ծախսերի աճը՝ 16.0%: Մարտի 4.7 մլրդ դրամ պակասուրդի պայմաններում հունվար-մարտ ամիսներին բյուջեի պակասուրդը կազմել է 0.9 մլրդ դրամ:

1. **Միջազգային զարգացումներ: Մարտին համաշխարհային տնտեսական ակտիվության աճը պայմանավորված է եղել զարգացած և զարգացող երկրներում մշակող արդյունաբերության և ծառայությունների ոլորտների կտրուկ աճով:** Մարտին մշակող արդյունաբերության արագ աճը եղել է ԱՄՆ տնտեսական ակտիվության աճի հիմնական պայմանավորող գործոնը, որն էլ պայմանավորված է եղել պահանջարկի վերականգնմամբ. զբաղվածությունն այս ոլորտում նույնպես արագ տեմպերով աճ է գրանցել: Մյուս կողմից, ծառայությունների ոլորտի աճը նախորդ ամսվա համեմատ ավելի դանդաղ էր: Եվրագոտու տնտեսությունը կարծես թե վերադարձ է կատարել դեպի աճի շրջափուլ (Composite PMI ինդեքսը մարտին կազմել է 50.3[1]): Ընդ որում, աճին նպաստող հիմնական ճյուղը շարունակել է մնալ ծառայությունների ոլորտը, իսկ մշակող արդյունաբերությունը պահպանել է անկման միտումը: Աճող գործարար վստահությանը զուգընթաց երրորդ ամիսն անընդմեջ աճում է նաև զբաղվածությունը: Թույլ պահանջարկով պայմանավորված՝ շինարարության ոլորտը շարունակել է անկում գրանցել: Մարտին Եվրագոտու տնտեսության աճն առավելապես ապահովել են Իսպանիան և Իտալիան: Իռլանդիայի տնտեսության կայուն ընդլայնումը փոխհատուցվել է Եվրագոտու անդամ երկու խոշոր տնտեսությունների՝ Գերմանիայի և Ֆրանսիայի կայուն նվազմամբ: Մարտին ՌԴ գործարար ակտիվության աճի արագացումը մշակող արդյունաբերության և ծառայությունների ոլորտներում հանգեցրել են տնտեսական ակտիվության աճի: Չինաստանում գրանցվել է 2023թ. մայիսից ի վեր գործարար ակտիվության ամենաարագ աճը: Ընդ որում, աճել է մշակող արդյունաբերության արտադրանքը՝ պայմանավորված պահանջարկի բարելավմամբ, սակայն կրճատվել է ոլորտում զբաղվածների թիվը: Ծառայությունների ոլորտում չնայած գործարար ակտիվության աճին, զբաղվածների թիվը մարտին նույնպես կրճատվել է:

Գծապատկեր 1.1. Composite PMI-ի միտումները



Մարտին գնաճը ԱՄՆ-ում էներգիայի և բենզինի գների աճով պայմանավորված կտրուկ արագացել է՝ կազմելով 3.5%՝ փետրվարի 3.2%-ի համեմատ: Եվրագոտում գնաճը շարունակել է նվազել՝ փետրվարին կազմելով 2.4% (փետրվար՝ 2.6%), իսկ ՌԴ-ում գնաճը կազմել է 7.7%, որը պայմանավորված է եղել ծառայությունների, պարենային և ոչ պարենային ապրանքների գնաճային ճնշումներով: Չինաստանում փետրվարին գրանցված 0.7% գնաճի համեմատ մարտին գրանցվել է 0.1%, ինչը հետևանք է Լուսնային նոր տարվա տոնակատարությամբ պայմանավորված փետրվարին սննդամթերքի կտրուկ գնաճից հետո գների անկմամբ:

Գործընկեր երկրների կենտրոնական բանկերի կողմից շարունակվել է իրականացվել զսպող քաղաքականություն՝ մարտին չփոփոխելով սահմանված տոկոսադրույքները: Հաշվի առնելով առկա գնաճային ճնշումները ԱՄՆ ԴՊՀ քաղաքականության տոկոսադրույքը պահպանվել է 5.25 - 5.5% մակարդակում, ԵԿԲ տոկոսադրույքը՝ 4.5%, ՌԴ ԿԲ հիմնական տոկոսադրույքը՝ 16% մակարդակում:

Գծապատկեր 1.2. Գնաճն ու դրամավարակային քաղաքականության արձագանքը գործընկեր երկրներում



ՌԴ կենտրոնական բանկը չնայած գնաճային ճնշումների աստիճանական թուլացմանը՝ տոկոսադրույքը պահպանել է նույն

[1] Ինդեքսի 50-ից բարձր արժեքը վկայում է նախորդ ամսվա համեմատ աճի մասին, իսկ 50-ից փոքր արժեքը՝ նվազման:

մակարդակում, որը կերաշխավորի գնաճի աճող թափի դադարեցումը. գնաճին նպաստող գործոններից է ներքին պահանջարկի աճը, որը գերազանցում է ապրանքներ և ծառայություններ արտադրելու կարողությունը: Չինաստանի բանկը մարտին նույնպես պահպանել է քաղաքականության տոկոսադրույքի մակարդակը նույն՝ 3.45% մակարդակում:

Մետաղների և պարենային ապրանքների շուկաներում մարտին գրանցվել է գնաճ. նավթի միջազգային գինը նախորդ ամսվա նկատմամբ աճել է 2%-ով, մոլիբդենի գինը՝ 2.6%-ով, պղնձի գինը՝ 4.6%-ով, իսկ պարենային ապրանքների գները՝ 1.1%-ով: Նավթի միջազգային գնի աճը պայմանավորող գործոն շարունակել է մնալ մերձավորարևելյան հակամարտությունը՝ հանգեցնելով մատակարարման շղթաների խաթարման, ինչպես նաև OPEC+-ի կողմից հայտարարված մինչև տարվա կես նավթի արտադրության լրացուցիչ կրճատումները (օրական 2.2 մլն բարել): Մյուս կողմից, մարտ ամսին ռուս-ուկրաինական շարունակվող հակամարտության համատեքստում, Ուկրաինայի կողմից հարձակումների արդյունքում ռուսական նավթավերամշակման հզորության շուրջ 14%-ը վերանորոգման նպատակով մասնակիորեն դադարեցվել են՝ ազդելով նավթի շուկայում համաշխարհային առաջարկի վրա: Արդյունքում, մարտին նավթի միջազգային գինը կազմել է 85.4 ԱՄՆ դոլար մեկ բարելի դիմաց՝ նախորդ ամսվա նկատմամբ աճելով 2%-ով, իսկ նախորդ տարվա մարտի նկատմամբ՝ 8.8%-ով:

Պղնձի միջազգային գինը մարտին նախորդ ամսվա համեմատ աճել է 4.6%-ով՝ կազմելով 8,689 ԱՄՆ դոլար մեկ տոննայի դիմաց, իսկ նախորդ տարվա նկատմամբ նվազել է 1.9%-ով: Մոլիբդենի միջազգային գինը շարունակել է աճել. մարտին նախորդ ամսվա համեմատ աճել է 2.6%-ով, իսկ նախորդ տարվա մարտի նկատմամբ նվազել է 34.8%-ով:

Պարենային ապրանքների համաշխարհային գինը նախորդ ամսվա համեմատ աճել է 1.1%-ով՝ պայմանավորված բուսական յուղերի, կաթնամթերքի և մսի գների աճով:

Գծապատկեր 1.3. Նավթի, մետաղների և պարենի գների զարգացումներ





2. Արտաքին հատվածի զարգացումներ: 2024թ. մարտին արձանագրվել է արտահանման և ներմուծման աճի տեմպերի արագացում: Մարտին արտահանումն աճել է 3 անգամ (նախորդ ամսվա աճը՝ 2.9 անգամ), որին ամենամեծ նպաստումն է ունեցել դեպի ԱՄԷ արտահանումը: **Ներմուծումն աճել է 156.2%-ով (նախորդ ամսվա աճը՝ 2 անգամ)**:

Գծապատկեր 2.1. Արտահանման և ներմուծման միտումները, մլն դոլար



Վերջին երկու տարիների անընդմեջ աճից հետո ընթացիկ տարվա հունվար-մարտ ամիսներին արձանագրվել է ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվի նվազում: 2024թ. մարտ ամսին արձանագրվել է ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվի 3.6% նվազում (նախորդ ամսվա նվազումը՝ 2.6%): Նվազմանը հիմնականում նպաստում է ունեցել ՌԴ-ից զբոսաշրջիկների թվի նվազումը (9.6 տոկոսային կետ):

Գծապատկեր 2.2. ՌԴ-ից և այլ երկրներից դեպի ՀՀ զբոսաշրջիկների հոսքերը



Շարունակվել է դրամական փոխանցումների նախորդ տարվա նվազման միտումները: 2024թ. մարտին ոչ առևտրային բնույթի զուտ դրամական փոխանցումները նախորդ տարվա մարտի համեմատ նվազել են շուրջ 51.8%-ով՝ պայմանավորված հիմնականում ՌԴ-ից փոխանցումների շուրջ 67.6% նվազմամբ:

Գծապատկեր 2.3. Ֆիզիկական անձանց ոչ առևտրային բնույթի փոխանցումների զուտ ներհոսքը



ՀՀ դրամը մարտին ռուբլու նկատմամբ շարունակել է արժևորվել, իսկ դոլարի և եվրոյի նկատմամբ պահպանել է արժեզրկման միտումը: Մասնավորապես՝ մարտին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ դրամը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է շուրջ 3%-ով, իսկ եվրոյի նկատմամբ՝ 4%-ով, մինչդեռ ռուսական ռուբլու նկատմամբ դրամը արժևորվել է 17%-ով:

Գծապատկեր 2.4. ՀՀ դրամի անվանական փոխարժեքի դինամիկան հիմնական արժույթների նկատմամբ



3. ՀՀ տնտեսական զարգացումներ: Տնտեսական ակտիվության աճի բարձր տեմպերը պահպանվել են նաև 2024թ. մարտին և կազմել 15.3%՝ փետրվարի նկատմամբ դանդաղելով 1.4 տոկոսային կետով՝ պայմանավորված հիմնականում արդյունաբերության և ծառայությունների ոլորտի աճերի դանդաղմամբ, մինչդեռ շինարարության և առևտրի ոլորտներում նկատվել է աճի տեմպերի արագացում: Արդյունքում՝ հունվար-մարտին տնտեսական ակտիվության աճը կազմել է 14.3%: Թեպետ արդյունաբերության աճի տեմպի՝ նախորդ տարվա նոյեմբերից սկիզբ առած արագացման միտումները շարունակվել են նաև 2024թ. հունվար-մարտ ամիսներին՝ պայմանավորված հիմնականում ոսկերչական արտադրատեսակների արտադրության աճի բարձր տեմպերով, այնուամենայնիվ մարտ ամսին նկատվել է արդյունաբերության աճի տեմպի 2.9 տոկոսային կետով դանդաղում:

Վերջին ամիսների զարգացումների արդյունքում, ոսկերչության առաջանցիկ աճերով պայմանավորված՝ հունվար-փետրվարին ՏԱՑ-ի աճն ապահովող հիմնական ճյուղը եղել է արդյունաբերությունը, որին հաջորդել են առևտրի (մեծածախ առևտուր) և ծառայությունների (ֆինանսական և ապահովագրական գործունեություն) ոլորտները: Արդյունաբերության ոլորտի վրա շարունակում է բացասաբար ազդել հանքագործական արդյունաբերության անկումը՝ 3.1 տոկոս (նպաստումը՝ -0.7 տոկոսային կետ): Շինարարության ոլորտը նույնպես շարունակել է նպաստել տնտեսական ակտիվությանը: Ընդ որում՝ շինարարության աճն ըստ ֆինանսավորման աղբյուրների հունվար-փետրվարին պայմանավորվել է հիմնականում բնակչության և կազմակերպությունների միջոցներով իրականացված շինարարության աճերով:

Գծապատկեր 3.1. ՏԱՑ և տնտեսության ճյուղերի աճերը (դիսկրետ, %)



Գծապատկեր 3.2. ՏԱՑ և տնտեսության ճյուղերի աճերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (կուտակային, %)



Տնտեսական բարձր ակտիվության պայմաններում մարտին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 8.1%-ով՝ կազմելով 307,655 դրամ (ընդ որում՝ պետական հատվածում աճել է 9.6%-ով՝ կազմելով 213,443 դրամ, իսկ ոչ պետական հատվածում՝ 7.3%-ով՝ կազմելով 345,621 դրամ): Իրական աշխատավարձը 1.2% գնանկման պայմաններում աճել է 9.4%-ով:

Փետրվարին պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը նվազել է 4.5%-ով, իսկ վարձու աշխատողների թիվն աճել՝ շուրջ 5.0%-ով, կազմելով 733,917 մարդ, պայմանավորված հիմնականում առևտրի, կրթության, ինչպես նաև կացության և հանրային սննդի կազմակերպման ու շինարարության ոլորտներում աշխատողների թվի աճով:

Գծապատկեր 3.3. Միջին ամսական աշխատավարձ, վարձու աշխատողներ, (դիսկրետ)



ՀՀ անշարժ գույքի շուկայում մարտ ամսին գները շարունակել են աճել, չնայած աճի տեմպը փետրվարի նկատմամբ դանդաղել է: Երևան քաղաքում բազմաբնակարան շենքերի բնակարանների շուկայական միջին գների աճը փետրվարի համեմատ ըստ վարչական շրջանների տատանվել է -0.7-ից 0.4% շրջանակներում, իսկ նախորդ տարվա մարտ ամսվա նկատմամբ՝ 8.4-ից 15.6% շրջանակներում՝ ամենաբարձր գինը գրանցելով Կենտրոն վարչական շրջանում (1մ^2 մակերեսի համար՝ 902,000 դրամ), իսկ ամենացածր գինը՝ Նուբարաշեն վարչական շրջանում (1մ^2 մակերեսի համար՝ 226,500 դրամ): Մարզերում բնակարանների շուկայական միջին գների աճը փետրվարի համեմատ տատանվել է -1.5-ից 1.7% շրջանակներում, իսկ նախորդ տարվա մարտ ամսվա նկատմամբ՝ 2.4-26.6%՝ ամենաբարձր գինը գրանցելով Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքում (1մ^2 մակերեսի համար՝ 442,000 դրամ), իսկ ամենացածր գինը՝ Լոռու մարզի Թումանյան քաղաքում (1մ^2 մակերեսի համար՝ 26,500 դրամ):

4. Դրամավարկային քաղաքականություն: Մարտին գնանկումային տեմպերը շարունակվել են: 12 ամսյա գնաճը կազմել է -1.2%, իսկ բնականոն գնաճը կազմել է -0.7%: Մարտի 12-ին ՀՀ ԿԲ-ն նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ սահմանելով այն 8.5%:

Գծապատկեր 4.1. Գնաճը և վերաֆինանսավորման տոկոսադրույքը



12 ամսյա գնաճը շարունակել է պայմանավորվել հիմնականում սննդամթերքի գնաճի էական բացասական (-2.3 տոկոսային կետ) նպաստմամբ, որին որոշակիորեն հակակշռել են ծառայությունների, ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների դրական նպաստումները՝ համապատասխանաբար՝ 0.8 և 0.3 տոկոսային կետերով:

Գծապատկեր 4.2. 12 ամսյա գնաճին նպաստումները, %-ային կետ



5. Ֆինանսական միջնորդություն: Մարտին բանկային համակարգի ֆինանսական միջնորդությունը շարունակել է առաջանցիկ լինել տնտեսական ակտիվության համեմատ՝ բնորոշվելով նաև ավանդների նկատմամբ վարկերի առաջանցիկ աճով: Այսպես, ի տարբերություն նախորդ տարվա նույն ամսվա, վարկերի ծավալների աճը (17.9%) գերազանցել է ավանդների ծավալների աճին (12.1%): Ընդ որում, ռեզիդենտների վարկերի աճը կազմել է 19.7%, իսկ ռեզիդենտների ավանդների աճը՝ 12%: Վարկերի բարձր աճը ըստ ոլորտների շարունակել է ընդգրկուն լինել. ամենաբարձր նպաստումը շարունակել են ապահովել սպառողական (նպաստումը՝ 5.8 տոկոսային կետ, աճը՝ 24.8%), հիփոթեքային (նպաստումը՝ 5.4 տոկոսային կետ, աճը՝ 23.9%) վարկերը, սակայն տնտեսության ոլորտների (հատկապես՝ շինարարության և սպասարկման ոլորտների, և բացառությամբ արդյունաբերության) վարկավորումը ևս աճում է հիմնականում բարձր տեմպերով: Ավանդների և վարկերի ծավալների դրական տարբերությունը փետրվար և մարտ ամիսներին աճել է և կազմել 533 մլրդ դրամ: Ոչ ռեզիդենտների ավանդներն աճել են շուրջ 160 մլրդ դրամով (12.6% աճ) նախորդ տարվա նույն ամսվա, և 76.3 մլրդ դրամով՝ փետրվարի նկատմամբ: Պատմական համատեքստում ոչ ռեզիդենտների ավանդները շարունակում են պահպանվել բարձր մակարդակում (2022թ.-ի փետրվարի ցուցանիշից բարձր շուրջ 565 մլրդ դրամով):

Գծապատկեր 5.1. Բանկային համակարգի վարկերի և ավանդների 12 ամսյա աճերը, %



ՀՀ պետական պարտատոմսերի եկամտաբերությունները մարտին նվազել են, իսկ վարկերի և ավանդների տոկոսադրույքները հիմնականում անփոփոխ են: Մարտին պետական պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը շուրջ 1.9 անգամ գերազանցել է առաջարկը, ինչի արդյունքում պարտատոմսերի տոկոսադրույքները նվազել են: Վարկերի և ավանդների տոկոսադրույքները ընդհանուր առմամբ շարունակել են գտնվել իրենց միջին մակարդակների շրջականակներում, ընդ որում հիփոթեքային և սպառողական վարկերի տոկոսադրույքները որոշակի կայունացել են:

Գծապատկեր 5.2. Ֆինանսական շուկայի տոկոսադրույքները, %



6. Հարկաբյուջետային հատված[2]: ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների աճի տեմպը հունվար ամսվա համեմատ փետրվար-մարտ ամիսներին որոշակիորեն արագացել է: 2024թ.-ի մարտին հարկային եկամուտները կազմել են 190.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա մարտի նկատմամբ աճելով 9.3%-ով: 2024-ի հունվար-մարտ ամիսներին հարկային եկամուտները կազմել են 500.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 5.8 %-ով:

Գծապատկեր 6.1. Հարկային եկամուտների աճի տեմպը, %



Մարտ ամսվա հարկային եկամուտների աճի աղբյուրները եղել են շահութահարկը և եկամտային հարկը՝ համապատասխանաբար 6.7 և 6.9%-ային կետ նպաստումներով: Բացասական նպաստում են ունեցել ակցիզային հարկը (2.4%-ային կետ) և ավելացված արժեքի հարկը (1.6%-ային կետ)

Գծապատկեր 6.2. Հարկային եկամուտների աճին նպաստումները, %-ային կետ



Պետական բյուջեի ծախսերի աճը առաջանցիկ է եղել եկամուտների նկատմամբ: Մարտ ամսին պետական բյուջեն եկամուտները կազմել են 200.6 մլրդ դրամ (աճը՝ 9.4%), իսկ ծախսերը՝ 205.2 մլրդ դրամ (աճը՝ 16.0%): Ծախսերը ընդգրկել են 176.0 մլրդ դրամի ընթացիկ և 29.2 մլրդ դրամի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կազմել են 29.3 մլրդ դրամ: Ընթացիկ ծախսերը նախորդ տարվա մարտի համեմատ աճել են 11.5%-ով, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը՝ 52.7 %-ով:

2024-ի հունվար-մարտ ամիսներին պետական բյուջեի եկամուտները կազմել են 525.0 մլրդ դրամը (աճը՝ 6.0%), իսկ ծախսերը՝ 525.9 մլրդ դրամ (աճը՝ 21.0%):

[2] Հարկային եկամուտների և պետական բյուջեի ծախսերի կազմում ներառված է հիպոթեկային վարկի տոկոսագումարների դիմաց եկամտային հարկի վերադարձը՝ ինչպես հաշվետու, այնպես էլ՝ համեմատվող ժամանակահատվածների համար:

Գծապատկեր 6.3 Պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և պակասուրդը



Պետական բյուջեն առաջին եռամսյակում գրանցել է փոքր պակասուրդ: Մարտին ծախսերը եկամուտներին գերազանցել են 4.7 մլրդ դրամով, ընդ որում՝ հունվարին գրանցված հավելուրդի (68.6 մլրդ դրամ) և փետրվարին գրանցված պակասուրդի (64.9 մլրդ դրամ) հաշվին հունվար-մարտ ամիսների պակասուրդը կազմել է 0.9 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 60.9 մլրդ դրամ հավելուրդի համեմատությամբ: